

հնչեցնելով ամենուրեք, և երկնային ժպիտը, քաւիչ ցողը, իջաւ հոգիներու վրայ:

Այս անգամ Ազգերու խումբերու մէջ շերեցաւ միայն Հայը պաշտօնապէս. Հայը որ առաջին յորելեանին իսկ (1800ին) ներկայ էր Բարսեղ Երուսաղէմայ եպիսկոպոսի անձով. Հայը որ 1575ին պաշտօնապէս ուղարկած էր խումբ մը ուխտաւորաց, որոնց զլիաւորն էր Աղէքսանդր, և առաջնորդ՝ ինքն կաթողիկոսն Թադէոս Բ. այս անգամ երեցաւ միայն անհատական նախաձեռնութեամբ: Ժամանակաց պարագաներ չէին ներքը դժբախտաբար աւելին. Բայց հոն, վատիկանու պարտէզներու մէջ, ուր քրիստոնէայ առաքեալներու արիւնն ու քրտինքը իբրեւ ցուցահանդէս քարոզչական (esposizione mis-

sionaria) փոխադրած էր կերպով մը ի տես և ի հանգէս աշխարհի բովանդակ աշխարհը, «Գրիստոսի քաղաւորութիւնը, խաչի դրօշին ներքե տաղաւարած, հոն կենդանի պատկերացումն ու մարմնացումն հայ ազգին կրօնից և հոգւոյն, տեսանք նկարուած հայ Թազաւոր մը, Հեթում-եղբայր Յովհաննէս Կիլիկիոյ՝ որ կը հսկէր իւր Ազգին ճակատագրին վրայ, կ'աղօթէր և կը մաղթէր անոր՝ արծարծումն վերստին իւր Սուրբ Հայրապետաց հոգւոյն, միութիւն վերստին այն Գահուն ուսկից կը բխի յորդառաս ճշմարտութեան լոյսը, զրաւական իւր մշտանորոգ առուզութեան, առհաւատչեայ իւր վերանորոգ պայծառութեան և փառաց:

Հ. Թ. ԱԳՈՐ

Մ Ա Յ Ր Դ Ի Ի Ա Ն

ՄԻԻԹԱՐԵԱՆՑ ՎԵՆԵՏԿՈՑ. - Ի Ս. ՂԱԶԱՐ

(Շար. տես Բազմ. 1925, էջ 317)

ՃԼԲ.

Հետեւեալ նամակին գրիչն է Կեսարացի Վրթանէս Արքեպիսկոպոս Ստեփանեան¹, որմէ ուրիշ թուղթ մը հրատարակեցինք արդէն (տես ՃԺԹ):

Մեր նամակագրին մասնաւոր ուշադրութիւնը գրաւողն է Սառաֆեան Ուղղիս արքեպիսկոպոսը, Սա Արեւելէն վենետիկ եկած է 1744-ին: 1745-1747 զինքը Հռոմ կը գտնենք, ուր 1745 Նոյեմբեր 20-ին Հաւատոյ դաւանութիւն կու տայ. կը ներկայանայ նաև Բենեդ. ԺԻ.ին ու կը կատարէ նաև նոյն քաղաքին մէջ Հայ Միսի ձեռնադրութիւններ. (Սառաֆեանի ընդհանուր գործունէութեան վրայ տես Կենսագրութիւնը Գալսեմքեարեանէ):

Թէ Սարգիս իւր ժամանակի ազգային շրջանակին մէջ մեծ յարգանք վայելած է՝ կը տեսնենք զայդ Մայրավանքիս դիւանական մէկ ուրիշ անտիպ թուղթէն ալ. Անդրէաս անուն անձէ մը գրուած առ Միսիթար յանձնարարական մ'է, երբ նա արդէն վենետիկ ժամանած էր. հահա սոյն պատառիկը. «Մեր ամենապայծառ և գեղարդելի

1. Տես Կենսագրութիւնը՝ Գալսեմքեարեանի «Կենսագրութիւն Սարգիս Արքեպ. Սառաֆեան»ի մէջ, 207-213. վիճակ 1908. Տպ. ՄԻ.:

« սարգիս վարդապետի կողմանէ որ եկաւ Վենետիկ՝ յանձնեմ տէրութեանդ, թէպէտ
 & ոչ է պատեհ մեղաւորին նորայ կողմանէ բան գրել, տէրութիւնդ քաջ գիտէ որ-
 & քան մեծ անունն և համբաւ ունէր ի մէջ հայոց. եթող յամէնն ի փառս յիսուսի
 & և մեծ անարգանք կրեաց հայոց ազգէն, մեծ տառապանօք հազիւ նաւ մտաւ »
 (Պր. 25 փետր.ի 1745. իգմիբ)։

Սարգիս արքեպս.է առ Մխիթար գրուած ինը նամակներ, որոնց բնագիրները
 կը պահուին մեր Գիւմնը, հրատարակուած են Գալեմքեարեանի երկասիրութեան մէջ,
 որուն ի նպաստ օրինակողն եղած է Հ. Մ. Պոտուրեան¹։

Յայտնապէս կը տեսնուի, որ Մխիթարայ և անոր Հաստատութեան հետ սիրա-
 լիր յարաբերութեան մէջ եղած է Սառաֆեան, իւր աշակերտը Յովհ. Վ. Նուրտի-
 նեան ունի Սարգսի վրայ ոտանաւոր ընդարձակ կենսագրական մը, որ Որթագիւղի
 Անտոնեանց Իիւանէն օրինակելով հրատարակուած է Գալեմքեարեանի զրքին
 սկիզբը, Հոս մէջ կը բերենք հետեւեալ մէկ քանի տունները.

Ազաթէն Սարգիս հերթեալ փառս պատիւը, 1744

Գիւրեան խիզ մտացն ընթերիւ երկնածիբ,

Հեռացեալ է ոպտ յերաց անյարբիբ

Վարէր է վնէժ կեանս անդրբաւիբ։

Ուր նա զգտանէր զոմանս ի Հայոց

Ընդ որս կենակցեալ ոչ հանէր յուրաց,

Ձի գայնըս խաղաղ նըկատէր ի ծոց

Եկեղեցւոյ մօր ուղղափառ որդաց։

Սակայն սիրտ նորա յաւէս զաւարճանայր,

Երբ երթեալ է վանս կռեալ Սուրբ Ղազար,

Ձոր դեռ արնտեօք զերթ քաջ արբաւայր

Յոգնիմաստ ա՛րարդ ուրբին Մխիթար։

Որոց կենակցեալ անկողն սերս սիրով

Այս անեկ միմեանց ըլժային փութով,

Որով սփոփէր Սարգիս հըրճուելով

Ձօտարութենէն ոչ արբաւնչելով։

Դոյն վանաց ողոյն միտաբն կարգաւ

Ձօնէին նըմա զատ սէր շուք անբաւ,

Ձորոց զոչ լինէր զովութեամբ բազմաւ

Յամենայն ուսուր՝ ցօրն յորում հանգեաւ^{2...}

Վրթանէս Արքեպիսկոպոսի Թուղթը կը տեղեկագրէ նաեւ Հայ Մէսի տօնակա-
 տարութեանց մասին քահանայապետական լուսամտիւ կարգադրութիւն մը։

Առ գերապատիւ Եղբայր իմ սիրեցեալ ի Գրիստոս Մխիթար Արքայ Հայր

Յիսուսաւանդ ողոյն մատուցեալ՝ զեկուցումն առնեմ վերոգրեալ գերյարգելութեան
 քում, զի զսիրաւրական քարտէզն քոյ ընկալայ, էւ յետ երկուց աւուրց հասանելոյ ինձ
 քարտիզին, եկն հնաստ առ իս Գերապատիւ Եղբայր մեր Սարգիս Վարդապետն. և ըստ
 յանձնարարական քարտիզի քոյ՝ ընկալաք զնա մեծաւ սիրով և բազում յարգութեամբ
 և ըստ փոքր կարողութեան մերոյ արարաք նմա պատիւս։ Էւ ըստ վայելչութեան ան-
 ձինն՝ յարգարեցաք զերկուս մեծամեծ սննեակս ամենայն զարդուք և վայելչութեամբ.
 և այժմ է ի պատուի յոյժ առաջի մեծաւորաց և առաջի մեր ամենեցուն։ Շնորհակալ
 եմ զքէն յոյժ վասն այդմ ձաշոցի, որ այդչափ աշխատեցար ի յուրարկել զայն։
 Քանզի ի հրամանէ սրբազան Հայրապետին պարտաւորեալ մեր աստ՝ առ ի տօնել
 զտօնս ամենեկին ըստ սովորութեան հայոց, և ոչ այլ ազգ, ոչ գտանելով ի մեզ ի
 պատրաստի խորհրդատետր ըստ հայոց, բարուք հաշուեցաք միք աստ եղեալ կար-

1. ԱՅԷ էջ 145.

2. ԱՅԷ էջ 48. Երբ վնէժերէր։

զատորքս զճաշոց մի ունիլ. և առնել զայն յերես մասունեւ և ըստ պատշաճի առուրն՝ զգիրք և զաւետարանն ի վերայ նորա ընթեռնուլ, և ըստ այնմ վարիլ՝ վասն ոչ ունելոյ մեր գնորդդասեալոց նայոց ըստ սմենայն մասի, և զի, մի միդիցեն քահանայքն զանազան կերպիւ պատարագս մատուցանելով: Ահա ի մէջ քարտիզիս եղեալ զշնորհակալու թեան գիրն՝ աղաչեմ հասուցե՞ք ի ձեռն Պարոն Սահրաթին, և դուք ողջ լերուք ի տէրս:

Յամի Տեառն 1745

ի Նոյեմբերի 13

[Հոռովմ]

Գերայագութեան քում

Վրդանէս Վարդապետ

և Արթնպիսկոպոս

ՀԼԳ.

Հոռովմէն Սարգիս Արքեպս. Սառաֆեանի վրայ ահա ուրիշ նամակ մը կս:

Գերայագելի և գերապատուելի տեսանդ և հորդ իմոյ որդիական սիրով և յարգութեամբ սուրբ աչմ հաւերտնել

... Զայս զիրս անցած շաբաթ պիտի գրէի Բայց նոյն օրն հասանելով գեռապաշ- ծառ Սէրգիս եպիսկոպոսն ժամանակ ոչ ունեցայ գրելոյ. ահա, տէր իմ, եկեալ հասաւ այս յարգելի եպիսկոպոսս և հրամանքդ կրկին յանձնար[ար]ութիւն գրեալ էիր ինձ նուատագունիս, ինչ կարող է տկարութիւնն իմ այսպիսի անձու ծառայել և պատվել, զիս[ը] և իցէ ասի իւրեան, թէ ի յամենայն իրս որ համարեցէ զիս յարմար, մեծաւ յօժարութեամբ պատրաստի եմ ծառայել. նախ քան զգալն և ետ հասանելոյ խղիւցայ ոմանց մեծաւորաց, թէ որպիսի անձ իցէ կամ որչափ պատուոյ արժան. երեկեան ժողով- քի սէքրէթարն մօտսինեօր լէրքարն կկաւ առ ի յարգել զսա յոյժ սիրով, որ ոչ է սո- վորութիւն առնել այսպիսի յարգութիւն եպիսկոպոսաց Հայոց. ըստէփան վարդապետն զնա ընդ իւր թէրճիմանութիւն. սա ասէ թէ ես տեղս կենալու չեկի, այլ վերստին վէ- նէտիկ դառնալոց եմ, և ես ոչ գիտեմ թէ իրաւի իւր միտն այս է՝ կամ թէ վապի խո- հեմութեան այսպէս խօսի. վրդանէս եպիսկոպոսն ի հասանելն Յ օր կերակրեց հան- դերձ իւրայնովք յոյժ քաղցրութեամբ և սիրով. միայն ցաւիմ որ տեսեման վարդապետն ընդ յովհաննէս վարդապետին (որ է աշակերտ սոյն Սէրգիս եպիսկոպոսին) որոմ ինչ խոռովութեան ցանած են և սոյնս հարկաւորապէս յայտնվելոց է:...

Յամի տեսն 1745 Նոյեմբ.ի 13

[Հոռովմ]

(Շարունակելի)

Ծառայ Գահանէս պատկերահակ

Հ. ՂԵՈՒՆԻ ՏԱՅԵԱՆ

ՄՍԳՍԱՍԹԻ ԹԱՆԱՔԻՆ ՇԻՆՈՒԹԻՒՆԸ

ԺԹ Տօմարէն մէջ, որ ԺԳ դարու ժողովրդի կը հա- մարուի, կայ Նօթագրով. « Խորատ մաշաղաթի Թան(ա)քի՝ » որ հետեւան է.

« Առ նուկի մի կանաչ գդիճոր, եւ կէս նուկի նուան կեղեւ, եւ Ծեծէ մանտր, եւ լից գերկուսն ի նոր պուտուկ մի եւ լից իտր մի ջուր ի վերայ, եւ լից նուկի մի քա- ցախ ի վերայ, եւ այն քացախովն եփէ սա-

կաւիկ մի եւ ապա քամէ ի Թանձոր լաճ մի եւ ղարձոյ ի պուտուկն. եւ առ ԺԵ տրամ տամդ եւ Ծեծէ, եւ Թան(ա)քին ջրովն տորդէ, եւ զարկ փայտով շատ եւ ղարձո ի պուտուկն, եւ սակաւ մի այլ եփէ եւ է անգամ զեր- կաթն կրակացո եւ ի ներս զարկ եւ քամէ եւ լից ի կաղամարն եւ գրէ ».

(ԾԹ. ՅԵՆԱԳՐԱՅԻՆ Ս. ՂԱՅԱՐՈՒ)